ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 15-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 112 ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության 112 օպերատիվ կառավարման կենտրոնի ահազանգերի կառավարման վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի.

2) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության 112 օպերատիվ կառավարման կենտրոնի ճգնաժամային կառավարման վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 2-ի.

3) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության 112 օպերատիվ կառավարման կենտրոնի վերլուծության և ստանդարտացման վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 3-ի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2026 թվականի փետրվարի 15-ից:

Արփինե Սարգսյան
ք. Երևան
«13» 02 2026թ.

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության ներքին
գործերի նախարարի 2026 թվականի
փետրվարի 13-ի թիվ 15-Լ հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 112 ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՀԱՋԱՆԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) 112 օպերատիվ կառավարման կենտրոնի (այսուհետ՝ կենտրոն) ահազանգերի կառավարման վարչությունը (այսուհետ՝ սույն հավելվածում՝ վարչություն) կենտրոնի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, կենտրոնի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Վարչությունը կենտրոնի նպատակների և խնդիրների իրականացման համար օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) համակարգում է ահազանգերի ընդունումը, այդ թվում՝ խոսքի և լսողության խանգարումներ ունեցող անձանցից, դրանց գրանցումը, դասակարգումը, ըստ ենթակայության փոխանցումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ օպերատիվ արձագանքի ապահովումը.

2) կազմակերպում է ահազանգած անձի կարիքների ճշգրիտ գնահատումը և նրան անհրաժեշտ մասնագիտական, հոգեբանական խորհրդատվության տրամադրումը, ըստ անհրաժեշտության, ահազանգած անձի ուղղորդումը.

3) կազմակերպում է ահազանգած անձի գտնվելու վայրի կամ նրա կողմից նշված իրավախախտման, արտակարգ իրավիճակի կամ պատահարի վայրի առավելագույն սեղմ ժամկետում պարզումը (տեղորոշումը), ինչպես նաև՝ ահազանգած անձից ստեղծված իրավիճակը գնահատելու ու համապատասխան որոշում կայացնելու համար անհրաժեշտ և բավարար այլ տեղեկատվության ստացումը.

4) օպերատիվ արձագանքի կազմակերպման նպատակով, ըստ անհրաժեշտության, կազմակերպում է նախարարության իրավասու ստորաբաժանումներից, նախարարությանը ենթակա մարմիններից, ինչպես նաև՝ այլ մարմիններից ու կառույցներից ստեղծված իրավիճակը գնահատելու և համապատասխան որոշումներ կայացնելու համար առավելագույն սեղմ ժամկետում անհրաժեշտ և բավարար տեղեկատվության ձեռք բերումը.

5) համակարգում է իրավախախտման, արտակարգ իրավիճակի կամ պատահարի վայր անհրաժեշտ թվով ոստիկանության և փրկարարական իրավասու ծառայողների մեկնումը, ինչպես նաև կազմակերպում է իրավախախտման, արտակարգ իրավիճակի կամ պատահարի վայր մեկնած ծառայողներին անհրաժեշտ տեղեկությունների և կողմնորոշիչ տվյալների տրամադրումը, այդ թվում՝ տեղեկատվական շտեմարանների, կապի միջոցների և տեխնիկական համակարգերի կիրառման միջոցով.

6) համակարգում է իրավախախտման, արտակարգ իրավիճակի կամ պատահարի վայր մեկնած, ինչպես նաև արտակարգ իրավիճակների դեպքում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացմանը ներգրավված ոստիկանության և փրկարարական ծառայողների գործողությունների կառավարումը, ներառյալ՝ կազմակերպում է ծառայողների շարժին և գործողություններին հեռավար կարգով, այդ թվում՝ տեխնիկական համակարգերի միջոցով հետևելը, իրավիճակով պայմանավորված՝ լրացուցիչ ուժեր ուղարկելը և դրանց տեղաբաշխման փոփոխությունը.

7) կազմակերպում է արտաքին և ուժեղացված ծառայություն իրականացնող ստորաբաժանումների քանակի, գտնվելու վայրի, ծառայության ընթացքի վերաբերյալ տվյալների հավաքագրումը.

8) համակարգում է այլ մարմինների իրավասությանն առնչվող ահազանգերի դեպքում այդ մարմինների ու նախարարության, նախարարությանը ենթակա մարմինների ու այլ կառույցների միջև անխափան կապի, ինչպես նաև՝ ներդաշնակ փոխգործակցության կազմակերպումը.

9) համակարգում է արտակարգ իրավիճակների առաջացման (դրա սպառնալիքի) դեպքում, ինչպես նաև բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների անցկացման ժամանակ ոստիկանության, փրկարար ծառայության ներգրավման կազմակերպումը ու այդ ծառայությունների գործունեության ներդաշնակ աշխատանքի ապահովումը.

10) համակարգում է նախարարության իրավասության տիրույթում գտնվող հարցերի, ինչպես նաև՝ նախարարության ծառայողների և աշխատակիցների վերաբերյալ ստացված՝ բնույթով ահազանգ չհամարվող հեռախոսազանգերի ընդունումը, վերլուծությունը, մասնագիտական խորհրդատվության տրամադրումը, ուղղորդումը, ըստ անհրաժեշտության, դրանց ընթացքավորումը, այդ թվում՝ բարձրացված խնդիրների հաղթահարման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկումը.

11) հսկողություն է իրականացնում տեղեկատվական շտեմարանների, ծրագրային համակարգերի, կապի, տեխնիկական և այլ միջոցների նպատակային և արդյունավետ կիրառման նկատմամբ.

12) կենտրոնի պետի կամ կենտրոնի պետի տեղակալի հանձնարարությամբ, կենտրոնի իրավասության սահմաններում, իրականացնում է այլ գործառույթներ:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ, ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

4. Վարչության աշխատանքները կառավարում է կենտրոնի պետը:

5. Վարչության աշխատանքների համակարգումը, կենտրոնի պետի սահմանած համակարգման բնագավառներին համապատասխան, իրականացնում է կենտրոնի պետի տեղակալը:

6. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է վարչության պետը, ով ոստիկանության ծառայող է: Վարչության պետին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է նախարարը՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

7. Վարչության պետն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, նախարարության, կենտրոնի և սույն կանոնադրություններով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

8. Վարչության պետը հաշվետու է կենտրոնի պետին և կենտրոնի պետի՝ համապատասխան բնագավառը համակարգող տեղակալին:

9. Վարչության պետը՝

1) ղեկավարում է վարչության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է վարչության գործառույթների՝ օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան իրականացման համար.

2) ներկայացնում է տեղեկատվություն կենտրոնի պետին վարչության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին.

3) իր իրավասության սահմաններում տալիս է ցուցումներ և հանձնարարականներ՝ վարչության ծառայողներին և աշխատակիցներին.

4) առաջարկություններ է ներկայացնում կենտրոնի պետին՝ օրենքով և կենտրոնի կանոնադրությամբ նախատեսված կենտրոնի նպատակների, խնդիրների և գործառույթների վերաբերյալ.

5) ապահովում է նախարարի հրամանների, ինչպես նաև նախարարի և նախարարի համապատասխան տեղակալի հանձնարարականների և առաջադրանքների կատարումն ու արդյունքների մասին տեղեկացնում է կենտրոնի պետին.

6) վարչության լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ փաստաթղթեր.

7) իր լիազորությունների շրջանակներում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ.

8) իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է այլ գործառույթներ:

10. Վարչության պետի ժամանակավոր բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության պետի տեղակալը:

11. Վարչության պետի տեղակալը՝

1) կատարում է վարչության պետի հանձնարարականները և համակարգում է աշխատանքներն իրեն հանձնարարված բնագավառներում.

2) իր համակարգման բնագավառների վերաբերյալ վարչության պետին ներկայացնում է առաջարկություններ.

3) վարչության՝ իր համակարգման բնագավառում գտնվող ստորաբաժանումներին փոխանցում է վարչության պետի հանձնարարականները, այդ կապակցությամբ տալիս է

հանձնարարականներ ու առաջադրանքներ, իրականացնում է հսկողություն դրանց կատարման նկատմամբ.

4) պարբերաբար վարչության պետին ներկայացնում է տեղեկատվություն իրեն հանձնարարված աշխատանքների իրականացման ընթացքի և արդյունքների մասին.

5) իր լիազորությունների շրջանակներում համագործակցում է համապատասխան մարմինների և կազմակերպությունների հետ.

6) իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է այլ գործառույթներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ, ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԽՄԲԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

12. Վարչությունն ունի հետևյալ բաժինը, բաժանմունքները և խմբերը՝

1) Երևանի բաժին.

2) Լոռու բաժանմունք.

3) Շիրակի բաժանմունք.

4) Կոտայքի բաժանմունք.

5) Գեղարքունիքի բաժանմունք.

6) Արմավիրի բաժանմունք.

7) Արարատի բաժանմունք.

8) Վայոց ձորի բաժանմունք.

9) Սյունիքի բաժանմունք.

10) Արագածոտնի բաժանմունք.

11) Տավուշի բաժանմունք.

12) Թեժ գիծ (խմբի իրավունքով).

13) Տեխնիկական ապահովման խումբ:

13. Վարչության Երևանի բաժինը՝

1) իրականացնում է ահազանգերի ընդունումը, այդ թվում՝ խոսքի և լսողության խանգարումներ ունեցող անձանցից, դրանց գրանցումը, դասակարգումը, ըստ ենթակայության փոխանցումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ օպերատիվ արձագանքի ապահովումը.

2) իրականացնում է ահազանգած անձի կարիքների ճշգրիտ գնահատումը և նրան անհրաժեշտ մասնագիտական, հոգեբանական խորհրդատվության տրամադրումը, ըստ անհրաժեշտության, ահազանգած անձի ուղղորդումը՝ տվյալ իրավիճակին համարժեք իրականացնելու որևէ գործողություն կամ ձեռնպահ մնալու որևէ գործողության իրականացումից.

3) իրականացնում է ահազանգած անձի գտնվելու վայրի կամ նրա կողմից նշված իրավախախտման, արտակարգ իրավիճակի կամ պատահարի վայրի առավելագույն սեղմ ժամկետում պարզումը (տեղորոշումը), ինչպես նաև՝ ահազանգած անձից ստեղծված իրավիճակը գնահատելու ու համապատասխան որոշում կայացնելու համար անհրաժեշտ և բավարար այլ տեղեկատվության ստացումը.

4) օպերատիվ արձագանքի կազմակերպման նպատակով, ըստ անհրաժեշտության, իրականացնում է նախարարության իրավասու ստորաբաժանումներից, նախարարությանը

ենթակա մարմիններից, ինչպես նաև՝ այլ մարմիններից ու կառույցներից ստեղծված իրավիճակը գնահատելու և համապատասխան որոշումներ կայացնելու համար առավելագույն սեղմ ժամկետում անհրաժեշտ և բավարար տեղեկատվության ձեռք բերումը.

5) ապահովում է իրավախախտման, արտակարգ իրավիճակի կամ պատահարի վայր անհրաժեշտ թվով ոստիկանության և փրկարարական իրավասու ծառայողների մեկնումը, ինչպես նաև՝ իրավախախտման, արտակարգ իրավիճակի կամ պատահարի վայր մեկնած ծառայողներին տրամադրում է անհրաժեշտ տեղեկություններ և կողմնորոշիչ տվյալներ, այդ թվում՝ տեղեկատվական շտեմարանների, կապի միջոցների և տեխնիկական համակարգերի կիրառման միջոցով.

6) կառավարում է իրավախախտման, արտակարգ իրավիճակի կամ պատահարի վայր մեկնած, ինչպես նաև՝ արտակարգ իրավիճակների դեպքում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացմանը ներգրավված ոստիկանության և փրկարարական ծառայողների գործողությունները, ներառյալ՝ հետևում է ծառայողների շարժին և գործողություններին հեռավար կարգով, այդ թվում՝ տեխնիկական համակարգերի միջոցով, իրավիճակով պայմանավորված՝ ուղարկում է լրացուցիչ ուժեր և կազմակերպում դրանց տեղաբաշխման փոփոխությունը.

7) հավաքագրում է տվյալներ արտաքին և ուժեղացված ծառայություն իրականացնող ստորաբաժանումների քանակի, գտնվելու վայրի, ծառայության ընթացքի վերաբերյալ.

8) այլ մարմինների իրավասությանն առնչվող ահազանգերի դեպքում կազմակերպում է այդ մարմինների ու նախարարության, նախարարությանը ենթակա մարմինների ու այլ կառույցների միջև անխափան կապը, ինչպես նաև՝ ներդաշնակ փոխգործակցությունը.

9) արտակարգ իրավիճակների առաջացման (դրա սպառնալիքի) դեպքում, ինչպես նաև բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների անցկացման ժամանակ կազմակերպում է ոստիկանության, փրկարար ծառայության ներգրավումը ու ապահովում է այդ ծառայությունների գործունեության ներդաշնակ աշխատանքը.

10) վարչության բաժանմունքների կամ թեժ գծի իրավասությանն առնչվող ահազանգերի կամ բնույթով ահազանգ չհանդիսացող հեռախոսազանգերի ստացման դեպքում դրանք անհապաղ փոխանցում է վարչության իրավասու բաժանմունքներին կամ թեժ գծին.

11) կենտրոնի պետի, կենտրոնի պետի տեղակալի կամ վարչության պետի հանձնարարությամբ, կենտրոնի իրավասության սահմաններում, իրականացնում է այլ գործառույթներ:

14. Լոռու, Շիրակի, Կոտայքի, Գեղարքունիքի, Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի, Արագածոտնի, Տավուշի բաժանմունքներն իրականացնում են սույն հավելվածի 13-րդ կետի 1-9-րդ և 11-րդ ենթակետերով նախատեսված գործառույթները, ինչպես նաև՝ սույն հավելվածի 13-րդ կետի 10-րդ ենթակետով նախատեսված գործառույթը՝ այդ թվում՝ Երևանի բաժնի իրավասությանն առնչվող ահազանգերի ստացման դեպքում:

15. Թեժ գիծը՝

1) ընդունում և վերլուծում է նախարարության իրավասության տիրույթում գտնվող հարցերի, ինչպես նաև՝ նախարարության ծառայողների և աշխատակիցների վերաբերյալ ստացված կամ փոխանցված՝ բնույթով ահազանգ չհամարվող հեռախոսազանգերը.

2) հեռախոսազանգ կատարած անձանց տրամադրում է մասնագիտական խորհրդատվություն, ուղղորդում է այդ անձանց, ըստ անհրաժեշտության, իր իրավասության սահմաններում, ընթացքավորում է հեռախոսազանգերը, այդ թվում՝ ձեռնարկում է բարձրացված խնդիրների հաղթահարմանն ուղղությամբ միջոցառումներ.

3) ահազանգ ստանալու դեպքում դրանք անհապաղ փոխանցում է վարչության իրավասու բաժնին կամ բաժանմունքներին.

4) կենտրոնի պետի, կենտրոնի պետի տեղակալի կամ վարչության պետի հանձնարարությամբ, կենտրոնի իրավասության սահմաններում, իրականացնում է այլ գործառույթներ:

16. Տեխնիկական ապահովման խումբը՝

1) շուրջօրյա ռեժիմով ապահովում է կենտրոնի ստորաբաժանումների կողմից շահագործվող կապի, տեխնիկական միջոցների և ծրագրային համակարգերի անխափան աշխատանքը.

2)կենտրոնի ստորաբաժանումներին, վերջիններիս գործառույթների դրականացման կապակցությամբ, ցուցաբերում է անհրաժեշտ տեխնիկական աջակցություն.

3) կենտրոնի աշխատանքները անխափան կերպով իրականացնելու նպատակով առաջարկներ է ներկայացնում վարչության պետին՝ կապի և տեխնիկական նոր միջոցների անհրաժեշտության վերաբերյալ:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության ներքին
գործերի նախարարի 2026 թվականի
փետրվարի 13-ի թիվ 15-Լ հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 112 ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կենտրոնի ճգնաժամային կառավարման վարչությունը (այսուհետ՝ սույն հավելվածում՝ վարչություն) կենտրոնի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, կենտրոնի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Վարչությունը կենտրոնի նպատակների և խնդիրների իրականացման համար օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) համակարգում է Հայաստանի Հանրապետության վարչապետին քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնելու գործընթացի կազմակերպումը և ըստ այդմ՝ համապատասխան պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելը.

2) համակարգում է արտակարգ իրավիճակների առաջացման (դրա սպառնալիքի) դեպքում, ինչպես նաև բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների անցկացման ժամանակ օրենսդրությամբ նախատեսված մարմինների, պաշտոնատար անձանց և հանրության ազդարարումն ու իրազեկումը, ինչպես նաև կենտրոնացված ազդարարման համակարգի գործունեության կազմակերպումը.

3) համակարգում է հանրային միասնական հաղորդակցության ապահովումը, ներառյալ՝ ազդարարման պարտականություն ունեցող կառույցներին անհրաժեշտ աջակցության ցուցաբերումը.

4) համակարգում է նախարարությանը, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման այլ շահագրգիռ մարմիններին, կազմակերպություններին արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության շուրջօրյա ապահովումը.

5) կազմակերպում է տեղեկատվության ներմուծումը (այդ թվում՝ նաև ձևաչափային հարմարեցմամբ) էլեկտրոնային քարտեզագրական համակարգ.

6) կազմակերպում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ մշտադիտարկման արդյունքների, գործունեության համար անհրաժեշտ այլ տեղեկատվության հավաքագրման և փոխանակման նպատակով համագործակցությունը.

7)կազմակերպում է ըստ սահմանված ձևաչափերի և ժամկետների՝ շահագրգիռ մարմիններին ու պաշտոնատար անձանց Հայաստանի Հանրապետությունում գրանցված արտակարգ իրավիճակների ու պատահարների մշտադիտարկման արդյունքների, դրանց վերլուծության, կանխատեսումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը.

8) համակարգում է վերլուծության հիման վրա արտակարգ իրավիճակների ու պատահարների, ըստ տարիների, համեմատական քարտեզների կազմումը.

9) ապահովում է հնարավոր իրավիճակային (սցենարային) կամ այլ ոլորտային վերլուծական հենքի եռաչափ արտապատկերման մոդելների կառուցումը, մասնավորապես՝ արտակարգ իրավիճակների, ներառյալ՝ ճանապարհատրանսպորտային պատահարների կառավարման կապակցությամբ հաջորդաբար զարգացող հնարավոր իրադարձությունների կանխատեսումը և, ըստ այդմ, կենտրոնի կողմից իրականացվելիք կողմնորոշիչ գործողությունների մոդելավորումը.

10) ապահովում է իր իրավասության սահմաններում արտակարգ դրավիճակների բնագավառում, ըստ ուղղությունների, տարաժամկետ կանխատեսումների իրականացնումը.

11) առաջարկություններ է ներկայացնում մշտադիտարկման, իրավիճակի մոդելավորման և կանխատեսման գործընթացի կատարելագործման և արդիականացման, ինչպես նաև դրանց արդյունքները տարբեր ոլորտներում և արտակարգ իրավիճակներում արդյունավետ կիրառելու ուղղությամբ.

12) կենտրոնի պետի կամ կենտրոնի պետի տեղակալի հանձնարարությամբ, կենտրոնի իրավասության սահմաններում, իրականացնում է այլ գործառույթներ:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ, ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

4. Վարչության աշխատանքները կառավարում է կենտրոնի պետը:

5. Վարչության աշխատանքների համակարգումը, կենտրոնի պետի սահմանած համակարգման բնագավառներին համապատասխան, իրականացնում է կենտրոնի պետի տեղակալը:

6. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է վարչության պետը, ով փրկարար ծառայող է: Վարչության պետին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է նախարարը՝ «Փրկարար ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով

7. Վարչության պետն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, նախարարության, կենտրոնի և սույն կանոնադրություններով, ինչպես նաև՝ այլ իրավական ակտերով:

8. Վարչության պետը հաշվետու է կենտրոնի պետին և կենտրոնի պետի՝ համապատասխան բնագավառը համակարգող տեղակալին:

9. Վարչության պետը՝

1) ղեկավարում է վարչության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է վարչության գործառույթների՝ օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան իրականացման համար.

2) ներկայացնում է տեղեկատվություն կենտրոնի պետին վարչության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին.

3) իր իրավասության սահմաններում տալիս է ցուցումներ և հանձնարարականներ՝ վարչության ծառայողներին և աշխատակիցներին.

4) առաջարկություններ է ներկայացնում կենտրոնի պետին՝ օրենքով և կենտրոնի կանոնադրությամբ նախատեսված կենտրոնի նպատակների, խնդիրների և գործառույթների վերաբերյալ.

5) ապահովում է նախարարի հրամանների, ինչպես նաև՝ նախարարի և նախարարի համապատասխան տեղակալի հանձնարարականների և առաջադրանքների կատարումն ու արդյունքների մասին տեղեկացնում է կենտրոնի պետին.

6) վարչության լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ փաստաթղթեր.

7) իր լիազորությունների շրջանակներում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ.

8) իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է այլ գործառույթներ:

10. Վարչության պետի ժամանակավոր բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության պետի տեղակալը:

11. Վարչության պետի տեղակալը՝

1) կատարում է վարչության պետի հանձնարարականները և համակարգում է աշխատանքներն իրեն հանձնարարված բնագավառներում.

2) իր համակարգման բնագավառների վերաբերյալ վարչության պետին ներկայացնում է առաջարկություններ.

3) վարչության՝ իր համակարգման բնագավառում գտնվող ստորաբաժանումներին փոխանցում է վարչության պետի հանձնարարականները, այդ կապակցությամբ տալիս է հանձնարարականներ ու առաջադրանքներ, իրականացնում է հսկողություն դրանց կատարման նկատմամբ.

4) պարբերաբար վարչության պետին ներկայացնում է տեղեկատվություն իրեն հանձնարարված աշխատանքների իրականացման ընթացքի և արդյունքների մասին.

5) իր լիազորությունների շրջանակներում համագործակցում է համապատասխան մարմինների և կազմակերպությունների հետ.

6) իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է այլ գործառույթներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

12. Վարչությունն ունի հետևյալ բաժինները՝

1) Ազդարարման ապահովման բաժին.

2) Արտակարգ իրավիճակների կանխատեսման, քարտեզագրման և տարածական վերլուծության բաժին:

13. Ազդարարման ապահովման բաժինը՝

1) արտակարգ իրավիճակների առաջացման (դրա սպառնալիքի) դեպքում, ինչպես նաև բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների անցկացման ժամանակ իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված մարմինների, պաշտոնատար անձանց և հանրության ազդարարումն ու իրազեկումը, ինչպես նաև կազմակերպում է կենտրոնացված ազդարարման համակարգի գործունեությունը.

2) կազմակերպում է Հայաստանի Հանրապետության վարչապետին քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնելու գործընթացը և ըստ այդմ՝ համապատասխան պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելը.

3) ապահովում է հանրային միասնական հաղորդակցությունը, ներառյալ՝ անհրաժեշտ աջակցություն է ցուցաբերում ազդարարման պարտականություն ունեցող կառույցներին.

4) իրականացնում է նախարարությանը, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման այլ շահագրգիռ մարմիններին, կազմակերպություններին արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության շուրջօրյա ապահովումը.

5) կենտրոնի պետի, կենտրոնի պետի տեղակալի կամ վարչության պետի հանձնարարությամբ, կենտրոնի իրավասության սահմաններում, իրականացնում է այլ գործառույթներ:

14. Արտակարգ իրավիճակների կանխատեսման, քարտեզագրման և տարածական վերլուծության բաժինը՝

1) իրականացնում է տեղեկատվության ներմուծում (այդ թվում՝ նաև ձևաչափային հարմարեցմամբ) էլեկտրոնային քարտեզագրական համակարգ՝ ապահովելով հիդրոլոգիական, օդերևութաբանական, աշխարհագրական համակարգերի շտեմարանների արդիականացումը.

2) իր իրավասության սահմաններում համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ մշտադիտարկման արդյունքների, գործունեության համար անհրաժեշտ այլ տեղեկատվության հավաքագրման և փոխանակման գործում, այդ թվում՝ ձեռք է բերում իր իրավասությանը վերապահված ոլորտներին առնչվող՝ այլ մարմինների կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքները, իրականացնում դրանց մշակումը, ընդհանրացումն ու համակարգումը, ինչպես նաև մուտքագրումը էլեկտրոնային քարտեզագրական համակարգ.

3) ըստ սահմանված ձևաչափերի (քարտեզներ և տեղեկագրեր) և ժամկետների՝ շահագրգիռ մարմիններին ու պաշտոնատար անձանց է ներկայացնում Հայաստանի Հանրապետությունում գրանցված արտակարգ իրավիճակների ու պատահարների մշտադիտարկման արդյունքները, դրանց վերլուծությունը, կանխատեսումների վերաբերյալ տեղեկատվությունը.

4) վերլուծության հիման վրա կազմում է արտակարգ իրավիճակների ու պատահարների, ըստ տարիների, համեմատական քարտեզներ.

5) իրականացնում է հնարավոր իրավիճակային (սցենարային) կամ այլ ոլորտային վերլուծական հենքի եռաչափ արտապատկերման մոդելների կառուցումը, մասնավորապես՝ արտակարգ իրավիճակների, ներառյալ՝ ճանապարհատրանսպորտային պատահարների

կառավարման կապակցությամբ հաջորդաբար զարգացող հնարավոր իրադարձությունների կանխատեսումը և, ըստ այդմ, կենտրոնի կողմից իրականացվելիք կողմնորոշիչ գործողությունների մոդելավորումը.

6) իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում, ըստ ուղղությունների, իրականացնում է տարաժամկետ կանխատեսումներ.

7)վարչության պետին առաջարկություններ է ներկայացնում մշտադիտարկման, իրավիճակի մոդելավորման և կանխատեսման գործընթացի կատարելագործման և արդիականացման, ինչպես նաև դրանց արդյունքները տարբեր ոլորտներում և արտակարգ իրավիճակներում արդյունավետ կիրառելու ուղղությամբ.

8) կենտրոնի պետի, կենտրոնի պետի տեղակալի կամ վարչության պետի հանձնարարությամբ, կենտրոնի իրավասության սահմաններում, իրականացնում է այլ գործառույթներ:

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության ներքին
գործերի նախարարի 2026 թվականի
փետրվարի 13-ի թիվ 15-Լ հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 112 ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կենտրոնի վերլուծության և ստանդարտացման վարչությունը (այսուհետ՝ սույն հավելվածում՝ վարչություն) կենտրոնի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, կենտրոնի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Վարչությունը կենտրոնի նպատակների և խնդիրների իրականացման համար օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) կազմակերպում է իրավասու ստորաբաժանումներից օպերատիվ ամփոփագրերի (տեղեկագրերի) շուրջօրյա ընդունումը, գրանցումը, մշակումը և հաշվառումը.

2) համակարգում է ամփոփագրերի վերաբերյալ տվյալների ձևավորումը, ամփոփումը, տեղեկատվական շտեմարանների կազմումը, կազմակերպում է դրանց ներկայացումը իրավասու պաշտոնատար անձանց և մարմիններին.

3) կենտրոնում ստացված ահազանգերի շրջանակներում ապահովում է Հայաստանի Հանրապետությունում քրեածին իրավիճակի շուրջօրյա մշտադիտարկումը, դրա արդյունքներով հետևանքների կանխատեսումը և մոդելավորումը.

4) կենտրոնում ստացված ահազանգերի շրջանակներում ձեռքբերված տեղեկատվության հիման վրա քրեածին իրավիճակի հետևանքների կանխատեսման և մոդելավորման հաշվառմամբ՝ կազմակերպում է համապատասխան վերլուծությունների իրականացումը և դրանց հիման վրա կենտրոնի պետին ներկայացնում է համապատասխան առաջարկություններ, ինչպես նաև հանդես է գալիս քրեածին իրավիճակի վերահսկման գործիքակազմի կատարելագործմանը միտված օրենսդրական փոփոխությունների կամ այլ անհրաժեշտ միջոցառումների իրականացման նախաձեռնությամբ.

5) ապահովում է իրավախախտումները կամ պատահարները ծնող պայմանների ու պատճառների վերհանման միջոցով վերլուծությունների իրականացումը և դրանք

ներկայացնում է կենտրոնի պետին՝ համապատասխան պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ ներկայացնելու նպատակով.

6) իրավախախտումները կամ պատահարները ծնող պայմանների ու պատճառների վերլուծությունների հիման վրա կենտրոնի պետին ներկայացնում է համապատասխան առաջարկություններ, ինչպես նաև հանդես է գալիս իրավախախտումները կամ պատահարները ծնող պայմանների ու պատճառների հաղթահարմանը միտված օրենսդրական փոփոխությունների կամ այլ անհրաժեշտ միջոցառումների իրականացման նախաձեռնությամբ.

7) համակարգում է կենտրոնում ստացված ահազանգերի, արձանագրված իրավախախտումների, արտակարգ իրավիճակների կամ պատահարների վերաբերյալ տեղեկությունների ստացումը, մշակումը և ամփոփումը.

8) կազմակերպում է արձանագրված իրավախախտումների, արտակարգ դրավիճակների կամ պատահարների վերաբերյալ մշակված տեղեկությունների ուսումնասիրության հաշվառմամբ՝ վերլուծությունների իրականացումը և դրանց հիման վրա կենտրոնի պետին ներկայացնում է համապատասխան առաջարկություններ, ինչպես նաև հանդես է գալիս արտակարգ իրավիճակների կամ պատահարների արդյունավետ կառավարմանը միտված օրենսդրական փոփոխությունների կամ այլ անհրաժեշտ միջոցառումների իրականացման նախաձեռնությամբ.

9) ապահովում է ահազանգերի կառավարման մեթոդաբանության (ահազանգի տևողությունը, ահազանգը հասցեատիրոջը փոխանցելու ճշգրտությունը, ահազանգը փոխանցելու արագությունը, արձագանքող ուժերի թիրախային ներգրավումը, ներգրավման արագությունը և արդյունավետությունը և այլն) վերլուծությունը.

10) ապահովում է ահազանգերին արձագանքման արդյունավետության գնահատումը և կենտրոնի պետին ներկայացնում է համապատասխան առաջարկություններ.

11) կենտրոնի գործառույթների արդյունավետ իրականացման համար համակարգում է ծառայողական և աշխատանքային ստանդարտացված գործելակարգերի մշակումը և արդիականացումը.

12) կենտրոնի պետի կամ կենտրոնի պետի տեղակալի հանձնարարությամբ, կենտրոնի իրավասության սահմաններում, իրականացնում է այլ գործառույթներ:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ, ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

4. Վարչության աշխատանքները կառավարում է կենտրոնի պետը:

5. Վարչության աշխատանքների համակարգումը, կենտրոնի պետի սահմանած համակարգման բնագավառներին համապատասխան, իրականացնում է կենտրոնի պետի տեղակալը:

6. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է վարչության պետը, ով ոստիկանության ծառայող է: Վարչության պետին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է նախարարը՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

7. Վարչության պետն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով,

նախարարության, կենտրոնի և սույն կանոնադրություններով, ինչպես նաև՝ այլ իրավական ակտերով:

8. Վարչության պետը հաշվետու է կենտրոնի պետին և կենտրոնի պետի՝ համապատասխան բնագավառը համակարգող տեղակալին:

9. Վարչության պետը՝

1) ղեկավարում է վարչության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է վարչության գործառույթների՝ օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան իրականացման համար.

2) ներկայացնում է տեղեկատվություն կենտրոնի պետին վարչության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին.

3) իր իրավասության սահմաններում տալիս է ցուցումներ և հանձնարարականներ՝ վարչության ծառայողներին և աշխատակիցներին.

4) առաջարկություններ է ներկայացնում կենտրոնի պետին՝ օրենքով և կենտրոնի կանոնադրությամբ նախատեսված կենտրոնի նպատակների, խնդիրների և գործառույթների վերաբերյալ.

5) ապահովում է նախարարի հրամանների, ինչպես նաև՝ նախարարի և նախարարի համապատասխան տեղակալի հանձնարարականների և առաջադրանքների կատարումն ու արդյունքների մասին տեղեկացնում է կենտրոնի պետին.

6) վարչության լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ փաստաթղթեր.

7) իր լիազորությունների շրջանակներում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ.

8) իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է այլ գործառույթներ:

10. Վարչության պետի ժամանակավոր բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության պետի տեղակալը:

11. Վարչության պետի տեղակալը՝

1) կատարում է վարչության պետի հանձնարարականները և համակարգում է աշխատանքներն իրեն հանձնարարված բնագավառներում.

2) իր համակարգման բնագավառների վերաբերյալ վարչության պետին ներկայացնում է առաջարկություններ.

3) վարչության՝ իր համակարգման բնագավառում գտնվող ստորաբաժանումներին փոխանցում է վարչության պետի հանձնարարականները, այդ կապակցությամբ տալիս է հանձնարարականներ ու առաջադրանքներ, իրականացնում է հսկողություն դրանց կատարման նկատմամբ.

4) պարբերաբար վարչության պետին ներկայացնում է տեղեկատվություն իրեն հանձնարարված աշխատանքների իրականացման ընթացքի և արդյունքների մասին.

5) իր լիազորությունների շրջանակներում համագործակցում է համապատասխան մարմինների և կազմակերպությունների հետ.

6) իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է այլ գործառույթներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

12. Վարչությունն ունի հետևյալ բաժինները՝

1) Օպերատիվ ամփոփագրերի մշակման բաժին.

2) Քրեածին իրավիճակի մշտադիտարկման, կանխատեսման և մոդելավորման բաժին.

3) Վիճակագրության և վերլուծությունների բաժին:

13. Օպերատիվ ամփոփագրերի մշակման բաժինը՝

1) շուրջօրյա ռեժիմով իրավասու ստորաբաժանումներից ընդունում, գրանցում, մշակում և հաշվառում է օպերատիվ ամփոփագրերը (տեղեկագրերը).

2) իրավասու ստորաբաժանումներից ստանում և ըստ վերադասության զեկուցում է ծանր, առանձնապես ծանր հանցագործությունների կամ հանրային հնչեղություն ունեցող դեպքերի, զանգվածային միջոցառումների, արտակարգ իրավիճակների, պատահարների ընթացքի վերաբերյալ տվյալները.

3) վարչության պետին առաջարկներ է ներկայացնում օպերատիվ ամփոփագրերի վարման գործընթացի կատարելագործման և արդիականացման ուղղությամբ.

4) կենտրոնի պետի, կենտրոնի պետի տեղակալի կամ վարչության պետի հանձնարարությամբ, կենտրոնի իրավասության սահմաններում, իրականացնում է այլ գործառույթներ:

14. Քրեածին իրավիճակի մշտադիտարկման, կանխատեսման և մոդելավորման բաժինը՝

1) կենտրոնում ստացված ահազանգերի շրջանակներում իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում քրեածին իրավիճակի շուրջօրյա մշտադիտարկումը, դրա արդյունքներով հետևանքների կանխատեսումը և մոդելավորումը, այդ թվում՝ ինքնակարգավորվող (ավտոմատացված) վերլուծական համակարգերի միջոցով.

2) կենտրոնում ստացված ահազանգերի շրջանակներում ձեռքբերված տեղեկատվության հիման վրա քրեածին իրավիճակի հետևանքների կանխատեսման և մոդելավորման հաշվառմամբ՝ իրականացնում է համապատասխան վերլուծություններ և դրանց հիման վրա վարչության պետին ներկայացնում է համապատասխան առաջարկություններ, ինչպես նաև հանդես է գալիս քրեածին իրավիճակի վերահսկման գործիքակազմի կատարելագործմանը միտված օրենսդրական փոփոխությունների կամ այլ անհրաժեշտ միջոցառումների իրականացման նախաձեռնությամբ.

3) իրավախախտումները կամ պատահարները ծնող պայմանների ու պատճառների վերհանման միջոցով իրականացնում է վերլուծություններ և դրանք ներկայացնում վարչության պետին.

4) իրավախախտումները կամ պատահարները ծնող պայմանների ու պատճառների վերլուծությունների հիման վրա վարչության պետին ներկայացնում է համապատասխան առաջարկություններ, այդ թվում՝ ստանդարտացված գործելակարգերի, տարբեր քրեածին իրավիճակների մոդելավորման, ինչպես նաև օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ.

5) կենտրոնի պետի, կենտրոնի պետի տեղակալի կամ վարչության պետի հանձնարարությամբ, կենտրոնի իրավասության սահմաններում, իրականացնում է այլ գործառույթներ:

15. Վիճակագրության և վերլուծությունների բաժինը՝

9) ահազանգերի կառավարման վարչությունից ստանում, մշակում և ամփոփում է կենտրոնում ստացված ահազանգերը, հանցագործությունների, վարչական

իրավախախտումների, արտակարգ իրավիճակների կամ պատահարների վերաբերյալ տեղեկությունները.

10) կազմում է տեղեկատվական շտեմարաններ, վիճակագրական և վերլուծական տեղեկանքներ և սահմանված կարգով ներկայացնում վարչության պետին.

11) նախարարության ստորաբաժանումներին փոխանցում է անհրաժեշտ տվյալներ, ցուցաբերում է անհրաժեշտ վերլուծական աջակցություն.

12) վերլուծում է ահազանգերի կառավարման մեթոդաբանությունը (ահազանգի տևողությունը, ահազանգը հասցեատիրոջը փոխանցելու ճշգրտությունը, ահազանգը փոխանցելու արագությունը, արձագանքող ուժերի թիրախային ներգրավումը, ներգրավման արագությունը և արդյունավետությունը և այլն).

13) գնահատում է ահազանգերին արձագանքման արդյունավետությունը, և վարչության պետին ներկայացնում է համապատասխան առաջարկություններ.

14) վարչության պետին առաջարկներ է ներկայացնում վիճակագրության վարման գործընթացի կատարելագործման և արդիականացման, ինչպես նաև վիճակագրական տվյալների արդյունավետ կիրառման ուղղությամբ.

15) կենտրոնի գործառույթների արդյունավետ իրականացման համար մշակում և արդիականացնում է ծառայողական և աշխատանքային ստանդարտացված գործելակարգերը.

16) կենտրոնի պետի, կենտրոնի պետի տեղակալի կամ վարչության պետի հանձնարարությամբ, կենտրոնի իրավասության սահմաններում, իրականացնում է այլ գործառույթներ: